	259	Նշել ճիշտ պատասխանը.	Բանկ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ստեղծման և գործունեության վերակազմակերպման ու լուծարման առանձնահատկությունները սահմանվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքով
			Բանկ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պատասխանատու է իր մասնակիցների պարտավորությունների համար
			բանկ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ստեղծված է համարվում նրա պետական գրանցման պահից և այդ պահից կարող է իրականացնել բանկային գործունեություն

			բանկ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցները պատասխանատու են բանկի պարտավորությունների համար իրենց պատկանող ամբողջ գույքով
260	Նշել սխալ պնդումը.		պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները ՄՊԸ մասնակից չեն կարող լինել
			ՄՊԸ մասնակից կարող են լինել Հայաստանի Հանրապետությունը և համայնքները
			սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող բանկերի մասնակիցների գրանցամատյանի վարման կարգը սահմանվում է Կենտրոնական բանկի կողմից
			ՄՊԸ բանկի մասնակիցների թիվը կարող է գերազանցել 49
261	Նշել ճիշտ պատասխանը.		ՄՊԸ բանկի կանոնադրական կապիտալում ներդրումները կարող են կատարվել ՀՀ դրամով, Կենտրոնական բանկի համաձայնությամբ նաև արժեթղթերով, այլ գույք կամ գույքային իրավունքներով
			ՄՊԸ բանկի փաստացի համալրված կանոնադրական կապիտալի նվազեցումը գործունեության ընթացքում չի թուլյատրվում
			ՄՊԸ բանկի կանոնադրական կապիտալի նվազեցում թուլյատրվում է միայն "Բանկերի եւ վարկային կազմակերպությունների սնանկության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքում
			ՄՊԸ բանկի կանոնադրական կապիտալի ավելացումը հնարավոր է միայն նրա ամբողջությամբ վճարումից հետո
262	Համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի, նշել սխալ պատասխանը.		ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերը կարող են նրա կողմից փոխանցվել ընկերության գործադիր մարմնի որոշմանը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի
			ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերը չեն կարող նրա կողմից փոխանցվել ընկերության խորհրդի որոշմանը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի
			գործադիր մարմնի ձևավորումը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունն է

			Ճիշտ պատասխանը նշված չէ
263	Համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի, ընկերության վերստուգիչ հանձնաժողովի գործառույթները, եթե դա նախատեսված է ընկերության կանոնադրությամբ, կարող է իրականացնել		գործադիր տնօրենը, որը գույքային շահերով կապված չէ ընկերության խորհրդի անդամների հետ
			հաշվապահը, որը գույքային շահերով կապված չէ ընկերության մասնակիցների հետ
			աուդիտորը, որը գույքային շահերով կապված չէ ընկերության գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող անձի հետ
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
264	Համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի արտահերթ ընդհանուր ժողովը հրավիրում է		ընդհանուր ժողովը գործադիր մարմինը խորհրդի անդամը բոլոր պատասխանները ճիշտ են
265	ՍՊԸ ընկերության գործադիր մարմինը հաշվետու է		միայն ընդհանուր ժողովին ընդհանուր ժողովին և ընկերության խորհրդին միայն ընկերության խորհրդին ներքին աուդիտին
266	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի նշվածներից որն է համարվում բանկի խորհրդի բազառիկ իրավունք		ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը բանկի կանոնադրության հաստատումը խորհրդի քանակական կազմի հաստատումը
267	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի խորհրդի նախագահին ընտրում է (են)		գործադիր տնօրենը խորհրդի անդամները (խորհրդի անդամների կազմից) ներքին աուդիտի ղեկավարը ընդհանուր ժողովը
268	Բաժնետիրական ընկերության վերակազմակերպման մասին որոշումն ընդունելուց հետո, ընկերությունը պարտավոր է այդ մասին գրավոր ծանուցել իր բոլոր պարտատերերին		60 օրվա ընթացքում պարտավոր չէ տեղեկացնել 30 օրվա ընթացքում նշված պատասխաններից ոչ մեկ ճիշտ չէ
269	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ռեեստրի վարումը և պահպանումը մասնագիտացված կազմակերպությանը հանձնած ընկերությունը		չի ազատվում այն վարելու և պահպանելու համար սահմանված պատասխանատվությունից ազատվում է այն վարելու և պահպանելու համար սահմանված պատասխանատվությունից

			ազատվում է այն վարելու պատասխանատվությունից, սակայն չի ազատվում այն պահպանելու համար սահմանված պատասխանատվությունից
			նշված պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ
270	Բաժնետիրական ընկերության թողարկած արտոնյալ բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը		չպետք է գերազանցի նրա կանոնադրական կապիտալի 25 տոկոսը
			չպետք է գերազանցի նրա կանոնադրական կապիտալի 15 տոկոսը
			չպետք է գերազանցի նրա կանոնադրական կապիտալի 20 տոկոսը
			չպետք է գերազանցի նրա կանոնադրական կապիտալի 30 տոկոսը
271	Բաժնետիրական ընկերության դեպքում՝ եթե երկու կամ ավելի անձինք սեփականատեր են մեկ բաժնետոմսի, ապա նրանք համարվում են		մեկ բաժնետեր
			յուրաքանչյուրը բաժնետոմսի անվանական արժեքի 50%-ի սեփականատեր
			երկու կամ ավելի բաժնետերեր
			ճիշտ պատասխանը նշված չէ
272	Բաժնետիրական ընկերության դեպքում՝ եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքի գումարը լրիվ վճարված չէ, ապա		ընկերությունը կանոնադրական կապիտալը կարող է մեծացնել ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին
			ընկերությունը կանոնադրական կապիտալը չի կարող մեծացնել ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին
			Ընկերությունը կանոնադրական կապիտալը կարող է մեծացնել անշարժ գույքի վաճառքի հաշվին
			բոլոր պատասխանները սխալ են
273	Բաժնետիրական ընկերության շահութաբաժինները վճարվում են		ընկերության գուտ շահույթից
			ընկերության շահույթից
			ընկերության եկամուտներից
			հիմնական կապիտալից
274	Բաժնետիրական ընկերության Կանոնադրական կապիտալը կնվազի՝		բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման դեպքում
			բաժնետոմսերի շուկայական արժեքի փոքրացման դեպքում
			չբաշխված շահույթի նվազման դեպքում
			ընկերության կողմից վնասներ կրելու դեպքում
275	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի շահագրգռվածության առկայությամբ գործարքը կնքվում է		ընկերության խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ
			գործարքը կնքելու մեջ շահագրգռվածություն չունեցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ

			ընկերության գործադիր տնօրենի որոշմամբ ճիշտ պատասխանը նշված չէ:
276	Եթե բաժնետիրական ընկերության կողմից շահագրգռվածության առկայությամբ գործարքի կնքման ժամանակ խորհրդի բոլոր անդամները շահագրգիռ անձինք են ճանաչվել, ապա գործարքը կնքելու մասին որոշումը ընդունվում է.		գործարքում շահագրգռվածություն չունեցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ
			ընկերության ժողովի կողմից շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ
			խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ;
			ընկերության գործադիր տնօրենի որոշմամբ:
277	Բաժնետիրական ընկերությունում ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի տարեկան շահութաբաժինների վճարման և շահութաբաժնի չափի մասին որոշումը ընդունում է		ընկերության խորհուրդը
			ընկերության գործադիր տնօրենը
			ժողովը՝ խորհրդի առաջարկությամբ
			ճիշտ պատասխանը նշված չէ
278	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության հաշվապահական հաշվառման կազմակերպման, դրա վիճակի և հավաստիության համար պատասխանատու է.		տնօրենը (գլխավոր տնօրենը)
			գլխավոր հաշվապահը
			ներքին աուդիտի անդամը
			տնօրենը (գլխավոր տնօրենը) և գլխավոր հաշվապահը
279	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, խոշոր գործարք կնքելու մասին որոշումը ընդունում է.		խորհրդի կողմից միաձայն
			ժողովի կողմից՝ դրան մասնակցող բաժնետերերի (քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի) ձայների 2/3-ով
			ժողովի կողմից՝ դրան մասնակցող բաժնետերերի (քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի) ձայների 3/4-ով
			բոլոր պատասխանները սխալ են
280	Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով բանկը պետք է ներգրավի օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ աուդիտ իրականացնող անձի		երկու տարին մեկ անգամ
			եռամսյակը մեկ անգամ
			յուրաքանչյուր տարի
			երեք տարին մեկ անգամ
281	Բանկի արտաքին աուդիտի ծառայությունների համար վճարվող գումարի չափը որոշում է		ընդհանուր ժողովը

			բանկի վարչությունը
			գործադիր տնօրենը
			բանկի խորհուրդը
282	Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն արտաքին աուդիտի կողմից կարող է իրականացվել նաև բանկի՝		քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) առնվազն 5 տոկոսի սեփականատեր մասնակիցների պահանջով
			քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) առնվազն 1 տոկոսի սեփականատեր մասնակիցների պահանջով
			բանկի վարչության պահանջով
			բանկի ներքին աուդիտի պահանջով
283	Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի Կենտրոնական բանկը		իրավունք չունի պահանջելու բանկից, որպեսզի նա փոխի արտաքին աուդիտն իրականացնող անձին և նշանակի այլ արտաքին աուդիտ իրականացնող անձ
			իրավունք ունի պահանջելու բանկից, որպեսզի նա փոխի արտաքին աուդիտն իրականացնող անձին և նշանակի այլ արտաքին աուդիտ իրականացնող անձ
			չի կարող պարտադրել բանկին չորս ամսվա ընթացքում հրավիրել արտաքին աուդիտ և հրապարակել նրա եզրակացությունը
			իրավունք չունի բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձից պահանջել բանկի աուդիտային ստուգման վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող փաստաթղթերը
284	Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի Կենտրոնական բանկի պահանջով		արտաքին աուդիտը պարտավոր է ներկայացնել բանկի աուդիտային ստուգման վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, անգամ եթե դրանք առևտրային, բանկային կամ այլ գաղտնիք կազմեն
			արտաքին աուդիտը պարտավոր չէ Կենտրոնական բանկ ներկայացնել բանկի աուդիտային ստուգման վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, եթե դրանք կազմում են առևտրային, բանկային կամ այլ գաղտնիք
			արտաքին աուդիտը պարտավոր չէ Կենտրոնական բանկ ներկայացնել բանկի աուդիտային ստուգման վերաբերյալ որևէ փաստաթուղթ

			արտաքին աուդիտը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել բանկի աուդիտային ստուգման վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթեր, բացառությամբ առևտրային, բանկային կամ այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի
	285	Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի. Բանկերը չեն կարող իրականացնել՝	ներդրումային գործունեություն ֆինանսական վարձակալության գործունեություն առևտրային գործունեություն բոլոր պատասխանները սխալ են
	286	Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի. ՀՀ տարածքում գործող բանկերը դրանց մասնաճյուղերը, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը կարող են՝	ընդունել ավանդներ, տրամադրել վարկեր, բացել և վարել հաշիվներ, մատուցել ֆինանսական խորհրդատվություն չեն կարող ընդունել ավանդներ, տրամադրել վարկեր, բացել և վարել հաշիվներ, կառավարել այլ անձանց գույքը ընդունել ավանդներ, տրամադրել վարկեր, ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, իրականացնել ապահովագրական գործունեություն ընդունել ավանդներ, տրամադրել վարկեր, իրականացնել ֆինանսական վարձակալություն և արտադրական գործունեություն
	287	Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի. ՀՀ տարածքում գործող բանկերը, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը չեն կարող իրականացնել՝	ֆակտորինգային գործունեություն ֆինանսական լիզինգ պարտքերի հավաքման հետ կապված գործունեություն պետական պատատոմսերի թողարկում
	288	Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի. ՀՀ ԿԲ-ն կարող է թույլատրել բանկերին իրականացնելու սույն օրենքով ուղղակիորեն չնախատեսված գործունեություն կամ գործառնություններ	եթե դրանք բխում են կամ սերտորեն կապված են բանկային գործունեության հետ եթե դրանք չեն վտանգում բանկի ավանդատուների շահերը բոլոր պատասխանները ճիշտ են եթե դրանք չեն վտանգում բանկի վարկատուների շահերը
	289	Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, Բանկը պարբերական երաշխիքային վճարը կատարում է	յուրաքանչյուր ամիս եռամսյակը մեկ անգամ յուրաքանչյուր ավանդի ներգրավվածն դեպքում կիսամյակը մեկ անգամ

290	Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, նոր ստեղծվող բանկերը միանվագ երաշխիքային վճարները պետք է վճարեն բանկային գործունեության լիցենզիան ստանալու պահից	մեկ ամսվա ընթացքում երեք ամսվա ընթացքում տասնօրյա ժամկետում ճիշտ պատասխան նշված չէ
291	Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, բանկերը լրացուցիչ երաշխիքային վճարը կատարում են, եթե	«Բանկերի և վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն որևէ բանկ համարվել է անվճարունակ Հիմնադրամի ծախսերը գերազանցում են եկամուտներին Հիմնադրամի միջոցները, բացառությամբ վարկերի, փոխառությունների, երաշխիքների, դրամաշնորհների, նվիրատվությունների և նվիրաբերությունների, բավարար չեն սահմանված կարգով և չափով երաշխավորված ավանդների հատուցումն իրականացնելու համար ճիշտ պատասխան նշված չէ
292	Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, երաշխավորված ավանդ է համարվում այն ավանդը	որը պատկանում է տվյալ բանկի գլխավոր հաշվապահին որը պատկանում է տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձին, որի սեփականատերը (համասեփականատերը) հրաժարվել է իր մասի նկատմամբ սեփականության իրավունքից ճիշտ պատասխանը նշված չէ
293	Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, երաշխավորված ավանդ չի համարվում այն ավանդը, որը	պատկանում է օտարերկրյա քաղաքացուն պատկանում է տվյալ բանկում ոչ նշանակալից մասնակցություն ունեցող անձին պատկանում է տվյալ բանկի վարչության անդամին երեքն էլ երաշխավորված ավանդ չեն համարվում
294	Նշել ճիշտ պատասխանը: Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, երաշխավորված ավանդի չափերն են.	եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը յոթ միլիոն հայկական դրամ է եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասնվեց միլիոն հայկական դրամ է

			եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը հինգ միլիոն հայկական դրամ է
			Ճիշտ պատասխանը նշված չէ
	295	Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է սխալ.	ավանդատուի նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ
			երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է որպես յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ
			ավանդների հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը
			ավանդների հատուցման երաշխավորողն է ՀՀ կենտրոնական բանկը
	296	Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի ո՞րը չի համարվում բանկային ավանդ	բանկի թողարկած անվանական արժեթղթերով ներգրավված դրամական միջոցները
			ավանդատուի բանկում բացված ժամկետային հաշվի վրա գտնվող դրամական միջոցները
			ավանդատուի բանկում բացված ժամկետային հաշվի վրա գտնվող դրամական միջոցների դիմաց հաշվեգրված տոկոսները
			դրամական միջոցները, որոնք տրամադրվել են բանկին այն օգտագործելու ռիսկն ավանդատուի կողմից ստանձնելու համաձայնությամբ
	297	Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, անվճարունակության հիմքերից որևէ մեկը բացահայտելու դեպքում Կենտրոնական բանկը երկշաբաթյա ժամկետում կարող է	բանկում նշանակել ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավար
			բանկին սնանկ ճանաչել
			բանկում նշանակել լուծարային կառավարիչ
			բոլոր պատասխաններն էլ ճիշտ են
	298	Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, բանկը համարվում է անվճարունակ, եթե՝	սպառել է իր կապիտալի 50 տոկոսը կամ ավելին
			սպառել է իր ընդհանուր կապիտալի 50 տոկոսը կամ ավելին
			սպառել է իր հիմնական կապիտալի 50 տոկոսը կամ ավելին
			սպառել է իր լրացուցիչ կապիտալը

	299	Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, բանկը համարվում է անվճարունակ, եթե՝	պարբերաբար խախտում է օրենքով սահմանված իրացվելիության նորմատիվը, պարբերաբար աշխատում է վնասով, պարբերաբար խախտում է օրենքով սահմանված պարտադիր պահուստավորման նորմատիվը խախտել է օրենքով սահմանված պարտադիր պահուստավորման նորմատիվը
	300	Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, բանկը համարվում է անվճարունակ, եթե՝	պարբերաբար չի կատարում ավանդների հատուցումն երաշխավորող հիմնադրամին երաշխիքային վճարները բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը ցածր է ՀՀ-ում գործող բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի միջինից ի վիճակի չէ բավարարել իր պարտատերերի օրինական պահանջները բոլոր պատասխաններն էլ ճիշտ են
	301	Համաձայն «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի՝ նշվածներից ո՞րը չի համարվում ռեզիդենտ	միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչությունները միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչությունների աշխատակիցները օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունների ՀՀ տարածքում գտնվող մասնաճյուղերը ՀՀ պետական գրանցում ստացած, հաշվառված կազմակերպությունների ՀՀ սահմանից դուրս գտնվող մասնաճյուղերը
	302	Համաձայն «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի՝ կարճաժամկետ վարկերի ժամկետայնությունը և փոքրածավալ գումարների չափը սահմանվում են	ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով ՀՀ կառավարության լիազորված մարմնի նորմատիվ իրավական ակտերով ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով՝ համաձայնեցնելով ՀՀ կառավարության լիազորված մարմնի հետ ճիշտ պատասխան նշված չէ

	303	<p>Նշված պնդումներից ո՞րն է սխալ: Համաձայն «Արժուքային կարգավորման և արժուքային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի՝ լիցենզավորված անձանց կողմից արժուքային հարաբերությունները կարգավորող օրենքների և դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջները խախտելու դեպքում ՀՀ կենտրոնական բանկը կարող է</p>	<p>առաջին անգամ խախտում թույլ տալու դեպքում տալ նախազգուշացում՝ խախտումը վերացնելու կամ ապագայում նման խախտում թույլ չտալու հանձնարարականով,</p>
			<p>մեկ տարվա ընթացքում երկրորդ անգամ խախտելու դեպքում մինչև մեկ տարի ժամկետով կասեցնել գործունեության լիցենզիան</p>
			<p>երեք կամ ավելի անգամ խախտելու համար նշանակել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով</p>
			<p>մեկ տարվա ընթացքում երկրորդ անգամ խախտելու դեպքում նշանակել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով</p>
	304	<p>Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկերին տրամադրվող վարկերը պետք է ապահովված լինեն</p>	<p>պետական արժեթղթերով</p>
			<p>ոչ ավելի, քան ինը ամիս մարման ժամկետ ունեցող հուսալի չեկերով եւ մուրհակներով</p>
			<p>ոսկուց և այլ թանկարժեք մետաղներից պատրաստված մետաղադրամներով և ստանդարտացված ձուլակտորներով</p>
			<p>բոլոր պնդումները ճիշտ են</p>
	305	<p>Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի՝ վերստուգվող անձը, նրա գործադիր մարմինը կամ նրա ղեկավարը, ինչպես նաև նշանակալից մասնակցություն ունեցող մասնակիցն իրավունք ունեն հաշվետվությանը կից ներկայացնել իրենց գրավոր առարկություններն ու բացատրությունները</p>	<p>մեկ շաբաթվա ընթացքում</p>
			<p>տասնօրյա ժամկետում</p>
			<p>երկշաբաթյա ժամկետում</p>
			<p>մեկամսյա ժամկետում</p>
	306	<p>ՀՀ կենտրոնական բանկի և խախտումներ թույլ տված բանկի միջև բանկի ֆինանսական վիճակի բարելավման և բնականոն գործունեության ապահովման նպատակով կարող է կնքվել պայմանագիր (եթե առկա չեն "Բանկերի եւ վարկային կազմակերպությունների սնանկության մասին" ՀՀ օրենքով սահմանված ամվճարունակության հիմքերը կամ դրանցից մեկը), որով կարող են նախատեսվել</p>	<p>խախտման վերացմանն ուղղված միջոցառումների ձեռնարկում</p>
			<p>շահաբաժինների վճարման կասեցում</p>
			<p>ավելի խիստ հիմնական տնտեսական նորմատիվների սահմանում</p>
			<p>բոլոր պատասխանները ճիշտ են</p>

	307	Նշված պնդումներից ո՞րն է սխալ: Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ կենտրոնական բանկի նախագահին իր որոշմամբ կարճում է վարույթը, եթե	խախտման համար օրենքով պատասխանատվություն նախատեսված չէ արձանագրված փաստը խախտում չէ
			մինչև պատասխանատվության միջոց կիրառելու մասին ՀՀ կենտրոնական բանկի նախագահի որոշման ստորագրումը վերստուգվող անձը կամ դրա ղեկավարը կամովին վերացրել է խախտումը բանկը սնանկ է ճանաչվել
	308	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի՝ նշվածներից ո՞րն է համարվում գրավի տեսակ ա) իրավունքի գրավ բ) շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավ գ) կոշտ գրավ	միայն «ա» միայն «ա» և «բ» միայն «ա» և «գ» «ա», «բ» և «գ»
	309	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի՝ նշված պնդումներից ո՞րն է սխալ	անշարժ գույքի ֆինանսական վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման անշարժ գույքի ֆինանսական վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ֆինանսական վարձակալության պայմանագիրը կնքվում է գրավոր՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով ֆինանսական վարձակալության պայմանագրի առարկա կարող է լինել ցանկացած սպառվող գույք վարկային պայմանագրով վարկատուն պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ տրամադրել փոխառուին փոխառության պայմանագրով փոխատուն պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ տրամադրել փոխառուին վարկային պայմանագրով փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից
	310	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի՝ նշված պնդումներից ո՞րն է սխալ	վարկային պայմանագրով փոխառուն պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ տրամադրել փոխառուին փոխառության պայմանագրով փոխատուն պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ տրամադրել փոխառուին վարկային պայմանագրով փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից

			փոխատուն իրավունք ունի փոխառության գումարից տոկոսներ ստանալ փոխառուից, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով
311	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի՝ դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագրեր չեն կարող կնքել	բանկերը	այլ վարկային կազմակերպությունները
			նման տեսակի գործունեության իրականացման թույլտվություն (լիցենզիա) ունեցող այլ առևտրային կազմակերպությունները
			ցանկացած անձինք
312	Բանկ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրությամբ սահմանում է	բանկի գտնվելու վայրը	մասնակիցների իրավունքները և պարտականությունները
			ընկերության կանոնադրական կապիտալի չափը
			բոլոր պատասխանները ճիշտ են
313	Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	բանկ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցն իրավունք ունի ընկերության կանոնադրական կապիտալում իր բաժնեմասը (դրա մասը) վաճառել կամ այլ ձևով օտարել տվյալ ընկերության միայն մեկ մասնակցի	բանկ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցն իրավունք ունի ընկերության կանոնադրական կապիտալում իր բաժնեմասը (դրա մասը) վաճառել կամ այլ ձևով օտարել տվյալ ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների
			ընկերության մասնակցի կողմից իր բաժնեմասը (դրա մասը) երրորդ անձանց օտարել թույլատրվում է, եթե այլ բան նախատեսված չէ ընկերության կանոնադրությամբ
			բոլոր պնդումները սխալ են
314	Բանկում իրականացված ստուգման արդյունքում արձանագրվել է, որ բանկը խախտել է մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը, ինչի համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկին տրվել է նախազգուշացում՝ մեկամսյա ժամկետում խախտումը վերացնելու հանձնարարականով: Մեկամսյա ընթացքում բանկի կողմից խախտումը չվերացնելու դեպքում	Կենտրոնական բանկը կարող է բանկի համապատասխան ղեկավարի նկատմամբ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի հազարապատիկը չգերազանցող գումարի չափով	Կենտրոնական բանկը կարող է բանկի համապատասխան ղեկավարին զրկել որակավորման վկայականից

			Կենտրոնական բանկը կարող է ուժը կորցրած ճանաչել բանկի լիցենզիան
			բոլոր պատասխանները ճիշտ են
	315	Բանկը որոշել է վաճառել վերջինիս սեփականությունը հանդիսացող անշարժ գույքը, որի հաշվեկշռային մնացորդը կազմում է 52.5 մլն դրամ, այն դեպքում, երբ բանկի ընդհանուր ակտիվները կազմում են 108.0 մլն դրամ: Բանկի գույքի վաճառքի վերաբերյալ որոշումը կայացվել է բանկի խորհրդի կողմից ձայների պարզ մեծամասնությամբ և գործարքը կատարվել է: Նշված դեպքում	գործարքի արդյունքում բանկը չի խախտել ՀՀ օրենսդրության պահանջները
			գործարքի որոշումը պետք է կայացվեր բանկի խորհրդի կողմից միաձայն
			գործարքի որոշումը պետք է կայացվեր բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի (մասնակիցների) ձայների 3/4-ով:
			նշված գործարքը վավեր է
	316	Բանկի կանոնադրական հիմնադրամի, գլխավոր պահուստի և չբաշխված շահույթի հանրագումարը կազմում է 6.0 մլրդ դրամ: Բանկի լրացուցիչ կապիտալի մեծությունը կազմում է 4.0 մլրդ դրամ: Ո՞ր դեպքում «Ա» կազմակերպության կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելիս բանկը պետք է ստանա ՀՀ ԿԲ-ի նախնական համաձայնությունը, եթե «Ա» կազմակերպության կանոնադրական հիմնադրամի մեծությունը կազմում է 3.500.000.000 դրամ	175.000.000 դրամ 100.000.000 դրամ 116.000.000 դրամ 115.000.000 դրամ
	317	Բանկի կանոնադրական հիմնադրամի, գլխավոր պահուստի և չբաշխված շահույթի հանրագումարը կազմում է 6.0 մլրդ դրամ: Բանկի լրացուցիչ կապիտալի մեծությունը կազմում է 4.0 մլրդ դրամ: Բանկն այլ անձանց կանոնադրական հիմնադրամում մասնակցություն չունի: Նշված պայմանների դեպքում, երբ բանկը պետք է ստանա ՀՀ ԿԲ-ի նախնական համաձայնությունը «Ա» և «Բ» կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամներում մասնակցություն ձեռք բերելիս	2.650.000.000 դրամ 2.800.000.000 դրամ 2.720.000.000 դրամ 2.250.000.000 դրամ
	318	Բանկի կանոնադրական հիմնադրամի, գլխավոր պահուստի և չբաշխված շահույթի հանրագումարը կազմում է 6.0 մլրդ դրամ: Բանկի լրացուցիչ կապիտալի մեծությունը կազմում է 4.0 մլրդ դրամ: Որ դեպքում բանկը «Ա» կազմակերպության կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելիս պետք է ստանա ՀՀ ԿԲ-ի նախնական համաձայնությունը	1.200.000.000 դրամ

			1.100.000.000 դրամ
			1.000.000.000 դրամ
			1.070.000.000 դրամ
	319	Բանկի կանոնադրական հիմնադրամի, գլխավոր պահուստի և չբաշխված շահույթի հանրագումարը կազմում է 3.0 մլրդ դրամ: Բանկի լրացուցիչ կապիտալի մեծությունը կազմում է 2.0 մլրդ դրամ: Բանկի ընդհանուր ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմում է 7.0 մլրդ դրամ: Այլ հավասար պայմանների դեպքում, ո՞ր դեպքում բանկը հիմնական միջոց ձեռք բերելու մասին որոշումը պետք է ընդունվի բանկի խորհրդի կողմից, եթե ձեռք բերվող գույքի արժեքը կազմում է	1.790.000.000 դրամ
			1.580.000.000 դրամ
			1.120.000.000 դրամ
			բոլոր պատասխանները ճիշտ են
	320	Բանկի կանոնադրական հիմնադրամի, գլխավոր պահուստի և չբաշխված շահույթի հանրագումարը կազմում է 3.0 մլրդ դրամ: Բանկի լրացուցիչ կապիտալի մեծությունը կազմում է 2.0 մլրդ դրամ: Բանկի ընդհանուր ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմում է 7.0 մլրդ դրամ: Այլ հավասար պայմանների դեպքում, ո՞ր դեպքում բանկը հիմնական միջոց ձեռք բերելու մասին որոշումը պետք է ընդունվի ընդհանուր ժողովի կողմից՝ ձայների 3/4-ով, եթե ձեռք բերվող գույքի արժեքը կազմում է	ճիշտ պատասխան նշված չէ
			1.450.000.000 դրամ
			1.500.000 000 դրամ
			2.190.000.000 դրամ
	321	Նշվածներից ո՞րը չի համարվում բանկի անվճարունակության հիմք	ի վիճակի չէ բավարարել իր պարտատերերի օրինական պահանջները
			բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը ցածր է Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի չափից
			պարբերաբար խախտում է օրենքով սահմանված պարտադիր պահուստավորման նորմատիվը
			պարբերաբար խախտում է օրենքով սահմանված իրացվելիության նորմատիվները
	322	Բանկի սնանկությունը	Կենտրոնական բանկի դիմումի հիման վրա դատարանի կողմից հաստատված նրա անվճարունակությունն է
			Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված նրա անվճարունակությունն է
			Լուծարային կառավարիչի կողմից հաստատված նրա անվճարունակությունն է
			բոլոր պատասխանները սխալ են

		Բանկի աուդիտն իրականացնող կազմակերպությունը, օրենքով սահմանված՝ բանկի անվճարունակության հիմքերից որեւէ մեկի հայտնաբերման դեպքում	պարտավոր է օրենսդրությամբ սահմանված կարգով Կենտրոնական բանկին անմիջապես տեղեկացնել դրա մասին՝ կցելով բոլոր փաստաթղթերը
			կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով Կենտրոնական բանկին անմիջապես տեղեկացնել դրա մասին՝ կցելով բոլոր փաստաթղթերը
			պարտավոր է օրենսդրությամբ սահմանված կարգով անմիջապես դիմել դատարան՝ կցելով բոլոր փաստաթղթերը
			կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով անմիջապես դիմել դատարան՝ կցելով բոլոր փաստաթղթերը
324		Բանկի սնանկության մասին դիմումով դատարան կարող է դիմել	ադմինիստրացիայի ղեկավարը
			բանկի պարտատերերը
			Կենտրոնական բանկը
			բանկի աուդիտն իրականացրած կազմակերպությունը
325		Բանկի սնանկության մասին դիմումով Կենտրոնական բանկը դատարան է դիմում, եթե բանկը	ի վիճակի չէ բավարարել իր պարտատերերի օրինական պահանջները
			բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը ցածր է Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի չափից
			ադմինիստրացիայի գործունեության ընթացքում Կենտրոնական բանկին ակնհայտ է դառնում, որ բանկը լուծարելու դեպքում հնարավոր է պահպանել բանկի միջոցների առավել մեծ քանակ, քան ադմինիստրացիայի գործունեությունը շարունակելիս, կամ չի հաջողվում վերականգնել բանկի կայուն վճարունակությունը:
			բոլոր պատասխանները ճիշտ են
326		Բանկի նկատմամբ սնանկության վարույթի մախաձեռնության իրավունքը	Կենտրոնական բանկի մախագահինն է
			բանկի պարտատերերինն է
			Կենտրոնական բանկի խորհրդինն է
			ՀՀ կառավարությանն է
327		Կենտրոնական բանկի՝ բանկի սնանկության մասին դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո դատարանը քննում է գործը	եռօրյա ժամկետում
			հնգօրյա ժամկետում
			մեկ ամսյա ժամկետում
			ճիշտ տարբերակը նշված չէ

		Բանկին պարտադիր ցուցում տալու կամ նրա գործողություններն այլ ձեւերով կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցների (բաժնետերերի, փայատերերի) ուղղակի կամ անուղղակի գործողությունների հետեւանքով բանկի սնանկության դեպքում այդ անձինք բանկի պարտավորությունների համար կրում են	համապարտ պատասխանատվություն սուբսիդիար պատասխանատվություն ֆիդուցիար պատասխանատվություն պատասխանատվություն չեն կրում
	329	Կենտրոնական բանկի նպատակ չի հանդիսանում	գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելն ու զարգացնելը շուկայում արժեթղթերի արդար գնագոյացման համակարգի ձեւավորումը ու պահպանումը դրամաշրջանառության կազմակերպումը եւ կարգավորումը հարկաբյուջետային քաղաքականության մշակումը
	330	Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	Կենտրոնական բանկը չի կարող առաջնային տեղաբաշխման ընթացքում իր հաշվին ձեռքբերել Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր Կենտրոնական բանկը կարող է առաջնային տեղաբաշխման ընթացքում իր հաշվին ձեռքբերել Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր Կենտրոնական բանկը չի կարող երկրորդային տեղաբաշխման ընթացքում իր հաշվին ձեռքբերել Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր
	331	Կենտրոնական բանկը չի լիցենզավորում	ճիշտ պատասխանը նշված չէ բանկային գործունեությունը ապահովագրական գործունեությունը գրավատնային գործունեությունը առողիտորական գործունեությունը
	332	Վերստուգվող անձանց մոտ ստուգումներն անցկացվում են ա) Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ, բ) Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ, գ) վերահսկող ստորաբաժանման ղեկավարի որոշմամբ	ճիշտ է միայն ա) պնդումը ճիշտ է միայն բ) պնդումը ճիշտ է միայն գ) պնդումը ճիշտ են ա) և բ) պնդումները
	333	Կենտրոնական բանկը վերստուգվող անձանց եւ դրանց ղեկավարների նկատմամբ կարող է կիրառել	օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ Կառավարության որոշմամբ նախատեսված պատասխանատվության միջոցներ

			Կենտրոնական բանկի կողմից ընդունված իրավական ակտերով նախատեսված պատասխանատվության միջոցներ
			Ազգային ժողովի որոշմամբ նախատեսված պատասխանատվության միջոցներ
334	Համաձայն Կենտրոնական բանկի մասին ՀՀ օրենքի՝ վերստուգվող անձի կամ դրա ղեկավարի նկատմամբ պատասխանատվության միջոցի կիրառման վարույթը սկսվում է		խախտումը արձանագրելու պահից խախտումը կատարելու պահից խախտումը հայտնաբերելու պահից որոշման կայացման պահից
335	Ֆինանսական վիճակի բարելավման և բնականոն գործունեության ապահովման նպատակով պայմանագիր կարող է կնքվել		Կենտրոնական բանկի եւ խախտումներ թույլ տված գրավատան միջև Կենտրոնական բանկի եւ խախտումներ թույլ տված արտարժույթի փոխանակման կետի միջև Կենտրոնական բանկի եւ խախտումներ թույլ տված բանկի միջև ճիշտ պատասխանը նշված չէ
336	Կենտրոնական բանկը հայտնաբերված խախտման համար կարող է վերստուգվող անձի կամ դրա ղեկավարի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառել խախտման արձանագրման պահից		1 տարվա ընթացքում 6 ամսվա ընթացքում 2 տարվա ընթացքում ճիշտ պատասխանը նշված չէ
337	Իր նպատակներն իրագործելու համար Կենտրոնական բանկն իրականացնում է.		կառավարության բանկային սպասարկումը հանդիսանում է կառավարության ֆինանսական գործակալն ու խորհրդատուն տիրապետում, օգտագործում և տնօրինում է ՀՀ միջազգային պահուստները նշված բոլոր պատասխանները ճիշտ են
338	Ստուգումներն անցկացվում են		վերստուգող ստորաբաժանման ղեկավարի տված լիազորագրով Կենտրոնական բանկի խորհրդի տված լիազորագրով Կենտրոնական բանկի նախագահի տված լիազորագրով ճիշտ տարբերակը նշված չէ
339	ՍՊԸ-ի գտնվելու վայրն է		հիմնադրի (հիմնադիրների) գտնվելու վայրը մասնակցի (մասնակիցների) գտնվելու վայրը գործադիր մարմնի գտնվելու վայրը գլխավոր հաշվապահի գտնվելու վայրը
340	ՍՊԸ-ն իր մասնակիցների պարտավորությունների համար		պատասխանատվություն չի կրում

			պատասխանատվություն է կրում հիմնադիր պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով
			պատասխանատվություն է կրում կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով
			սուբսիդիար պատասխանատվություն է կրում
341	Նշված պնդումներից որո՞ն են ճիշտ.		ՍՊԸ-ի մասնակիցը իրավունք չունի դուրս գալ ընկերությունից
			ՍՊԸ-ի մասնակիցը իրավունք ունի դուրս գալ ընկերությունից մասնակցություն ձեռք բերելուց առնվազն երկու տարի հետո
			իրավունք ունի ցանկացած պահի դուրս գալ ընկերությունից՝ անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից
			իրավունք ունի դուրս գալ ընկերությունից՝ մյուս մասնակիցների համաձայնության առկայության դեպքում
342	ՍՊԸ-ի մասնակիցն իր բաժնեմասը		գրավ դնել չի կարող
			կարող է գրավ դնել, եթե դա արգելված չէ կանոնադրությամբ
			կարող է գրավ դնել միայն ՍՊԸ-ի այլ մասնակիցներին
			կարող է գրավ դնել միայն երրորդ անձանց
343	Շահույթի բաշխումը ՍՊԸ-ի մասնակիցների միջև կարող է իրականացվել		տարին մեկ անգամ՝ ընդհանուր ժողովի որոշմամբ
			ցանկացած ժամանակ՝ ընդհանուր ժողովի որոշմամբ
			յուրաքանչյուր եռամսյակ՝ ընդհանուր ժողովի որոշմամբ
			գործադիր տնօրենի որոշմամբ՝ կանոնադրությամբ նախատեսված դեպքերում
344	ՍՊԸ-ի շահույթն ընկերության մասնակիցների միջև բաշխելու մասին որոշումն ընդունում է		ընդհանուր ժողովը
			ընդհանուր ժողովը կամ խորհուրդը, եթե վերջինիս նման լիազորություն վերապահված է կանոնադրությամբ
			խորհուրդը
			գործադիր մարմինը
345	ՍՊԸ-ի վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) ընտրվում է		խորհրդի կողմից
			գործադիր մարմնի կողմից
			ընդհանուր ժողովի կողմից
			ընդհանուր ժողովի կողմից, եթե այդ լիազորությունը կանոնադրությամբ չի վերապահվել խորհրդին

346	ՍՊԸ-ն կարող է վերակազմավորվել	լիակատար ընկերակցության բաժնետիրական ընկերության արտադրական կոոպերատիվի նշված բոլոր տարբերակները ճիշտ են
347	«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքը կարգավորվում է ՀՀ տարածքում գործող բանկերում հետևյալ անձանց պատկանող բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու հետ կապված հարաբերությունները	միայն իրավաբանական անձանց իրավաբանական և ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի ճիշտ պատասխանը նշված չէ
348	Օրենքի իմաստով երաշխավորված ավանդ չի համարվում այն բանկային ավանդը, ա) որը պատկանում է տվյալ բանկի ղեկավարին և/կամ նրա ընտանիքի անդամներին, բ) որը պատկանում է տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձին և/կամ նրա ընտանիքի անդամներին, գ) որի սեփականատերը (սեփականատերը) հրաժարվել է իր մասի նկատմամբ սեփականության իրավունքից	ճիշտ է միայն ա) պնդումը ճիշտ է միայն բ) պնդումը ճիշտ է միայն ա) և բ) պնդումները ճիշտ են և ա) և բ) և գ) պնդումները
349	Երաշխավորված ավանդի չափերն են	դրամային ավանդը 10 մլն. ՀՀ դրամ արտարժութային ավանդը 5 մլն. ՀՀ դրամ դրամային ավանդը 16 մլն. ՀՀ դրամի չափով, և արտարժութային ավանդը 7 մլն. ՀՀ դրամի չափով ճիշտ պատասխանը նշված չէ
350	Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի՝ ավանդների հատուցման երաշխավորողն է	Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը ՀՀ կենտրոնական բանկը ՀՀ ֆինանսների և եկոնոմիկայի նախարարությունը բոլոր տարբերակները ճիշտ են
351	Ո՞ր բանկերն են կատարում երաշխիքային վճարներ	ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերը ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերը, բացառությամբ անվճարունակ բանկերի ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերը, բացառությամբ իրացվելիության նորմատիվը պարբերաբար խախտած բանկերի

			ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերը, բացառությամբ ԿԲ կողմից սահմանված որոշակի չափի կանոնադրական կապիտալ ունեցող բանկերի
352	Երաշխիքային վճարները լինում են՝ ա) պարբերական, բ) միանվագ, գ) լրացուցիչ		Ճիշտ է միայն ա) պնդումը Ճիշտ է միայն բ) պնդումը Ճիշտ են և ա), և բ) պնդումները Ճիշտ են և ա), և բ), և գ) պնդումները
353	Ո՞վ է հանդիսանում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի հիմնադիրը		ՀՀ կենտրոնական բանկը Հայաստանի Հանրապետությունը ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերը Ճիշտ պատասխանը նշված չէ:
354	Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի՝ բանկերի կողմից նշված օրենքի պահանջների պահպանելու նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է		ՀՀ կենտրոնական բանկը Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը
355	Երաշխավորված ավանդների հատուցումն իրականացնում է		ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը բոլոր տարբերակները ճիշտ են ՀՀ կենտրոնական բանկը Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը
356	Բանկային գաղտնիք կազմող տեղեկատվություն է համարվում		ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը բոլոր տարբերակները ճիշտ են վարկային կազմակերպության կողմից նրա հաճախորդին կանխիկ տրամադրած վարկի մասին տեղեկությունը գրավատնային կազմակերպության կողմից նրա հաճախորդին կանխիկ տրամադրած վարկի մասին տեղեկությունը
357	«Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի համաձայն երրորդ անձ չեն համարվում		սնանկ ճանաչված բանկի պարտատերին հասանելի գումարի չափի մասին տեղեկատվությունը Ճիշտ պատասխանն նշված չէ դատարանները հարկային մարմինները

			վարկային կազմակերպությունները
			քրեական հետապնդում հարուցող մարմինները
358	Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանման երաշխավորն է		ՀՀ կառավարությունը
			բանկը
			դատարանը
			քրեական հետապնդում հարուցող մարմինները
359	«Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի համաձայն, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.		բանկին արգելվում է իր հաճախորդներին տեղեկացնել նրանց մասին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրելու փաստի վերաբերյալ
			բանկը պարտավոր է իր հաճախորդներին տեղեկացնել նրանց մասին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրելու փաստի վերաբերյալ
			բանկի ղեկավարը կարող է հարցաքննվել բանկի հաճախորդի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների վերաբերյալ, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի
			ճիշտ պատասխանը նշված չէ
360	Բանկերը հաճախորդների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրում են		տվյալ իրավաբանական անձի պարտատերերին՝ պարտատերի իրավունքները հիմնավորող բավարար փաստաթղթերի ներկայացման դեպքում
			իրավաբանական անձանց պետական գրանցման մարմին՝ իրավաբանական անձի լուծարումը գրանցելու հիմնավորող բավարար փաստաթղթերի ներկայացման դեպքում
			տվյալ հաճախորդի իրավահաջորդներին՝ իրավահաջորդության իրավունքները հիմնավորող բավարար փաստաթղթեր ներկայացման դեպքում
			տեղական ինքնակառավարման մարմիններին՝ իրավաբանական անձի համայնքի վարչական տարածքում ընդգրկված լինելու վերաբերյալ հիմնավորող բավարար փաստաթղթերի ներկայացման դեպքում
361	Բանկն իր հաճախորդի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները կարող է տրամադրել ՀՀ հարկային մարմիններին		Հարկային պետական տեսչության մարմնի ղեկավարի ընդունած ստուգման հրամանի հիման վրա
			Կենտրոնական բանկի նախագահի ընդունած համապատասխան որոշման հիման վրա

			քրեական հետապնդում հարուցող մարմինների ընդունած համապատասխան որոշման հիման վրա
			հաճախորդի բանկային հաշվի վրա բռնագանձում տարածելու մասին դատարանի վճռի կամ դատավճռի հիման վրա
362	Բանկի կողմից «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտում կհամարվի, եթե բանկը իր գործունեության անվտանգությունը, վարկերի և այլ ներդրումների վերադարձելիությունը ապահովելու նպատակով հաճախորդի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրի		վարկային կազմակերպություններին բանկերին Կենտրոնական բանկին գրավատանը
363	Բանկերի ղեկավարները պարտավոր են իրենց հաստատապես հայտնի նախապատրաստվող կամ արդեն իսկ կատարված հանցագործության մասին հայտնել		Կենտրոնական բանկին, որպես հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի` Լիազորված մարմին քրեական հետապնդում իրականացնող մարմնին հարկային մարմիններին դատարանին
364	«Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումները կարող են առաջացնել ա) վնասների հատուցում, բ) տուգանք, գ) քրեական պատասխանատվություն		Ճիշտ է միայն ա) պնդումը Ճիշտ է միայն բ) պնդումը Ճիշտ են և ա), և բ) պնդումները Ճիշտ են և ա), և բ), և գ) պնդումները
365	Բաժնետիրական ընկերությունն ստեղծված է համարվում`		պետական գրանցման պահից հիմնադիր պայմանագրի կնքման պահից կանոնադրության հաստատման պահից պատասխաններից ոչ մեկ ճիշտ չէ
366	Թվարկվածներից ո՞րը չի հանդիսանում բաժնետիրական ընկերության վերակազմակերպման ձև		ընկերության միացումը ընկերության վերակազմավորումը ընկերության տարանջատումը ընկերության միաձուլումը
367	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի , ընկերության և այլ անձանց հարաբերությունները բնութագրվում են հետևյալ կերպ		Ընկերությունը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար

			Ընկերության բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների համար
			Հայաստանի Հանրապետությունը եւ համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար
			Բոլոր տարբերակները ճիշտ են
	368	Բաժնետիրական ընկերության միացման դեպքում	մեկ կամ մի քանի ընկերության գործունեությունը դադարում է իր /իրենց/ իրավունքների և պարտականությունների փոխանցմամբ այլ ընկերությանը
			ստեղծվում է նոր ընկերություն՝ նրան երկու կամ ավելի միացվող ընկերությունների դադարմամբ
			մեկ կամ մի քանի ընկերությունների գործունեությունը չի դադարում իր /իրենց/ իրավունքների և պարտականությունների մի մասը փոխանցելով այլ ընկերությանը
			Ճիշտ պատասխան նշված չէ
	369	Բաժնետիրական ընկերության տեսակներն են	բաց և փակ
			լրացուցիչ և սահմանափակ պատասխանատվությամբ
			լիակատար և վստահության վրա հիմնված
			բոլոր տարբերակները ճիշտ են
	370	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի,	Բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը սահմանվում է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով
			Բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը սահմանվում է ընկերության կանոնադրությամբ
			Բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի նվազագույն չափ չի սահմանվում, առանձին դեպքերում, կախված գործունեության ոլորտից կարող են սահմանվել օրենքով կամ այլ իրավական ակտերով
			Ճիշտ պատասխանը նշված չէ
	371	Բաժնետիրական ընկերության արտոնյալ բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը չպետք է գերազանցի ընկերության կանոնադրական կապիտալի	30 տոկոսը
			50 տոկոսը
			75 տոկոսը
			25 տոկոսը
	372	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, այն դեպքում, երբ երկու անձնաց պատկանում է մեկ բաժնետոմս, նրանք համարվում են	մեկ բաժնետեր

			մեկ բաժնետոմսի 2 համաբաժնետերեր
			երկու բաժնետեր
			բաժնետեր չեն հանդիսանում
373	Ըստ ապահովվածության տեսակի ի՞նչ տեսակի պարտատոմսեր կարող է թողարկել բաժնետիրական ընկերությունը ա) ընկերության գույքի գրավով ապահովված պարտատոմսեր, բ) առանց ապահովման պարտատոմսեր.		ճիշտ է միայն ա) պնդումը ճիշտ է միայն բ) պնդումը ճիշտ են և ա), և բ) պնդումները ճիշտ պատասխան նշված չէ
374	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.		բաց բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի կատարել բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխում՝ բաց բաժանորդագրության միջոցով բաց բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի կատարել բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխում՝ փակ բաժանորդագրության միջոցով փակ բաժնետիրական ընկերությունն իրավունք չունի կատարել բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխում՝ բաց բաժանորդագրության միջոցով նշված բոլոր տարբերակները ճիշտ են
375	Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշումը ընդունում է բաժնետիրական ընկերության		գործադիր տնօրենը խորհուրդը ընդհանուր ժողովը՝ խորհրդի առաջարկությամբ ընդհանուր ժողովը
376	Բաժնետիրական ընկերությունը իրավունք չունի որոշում ընդունել շահութաբաժինների վճարման մասին, եթե ա) լրիվ վճարել է կանոնադրական կապիտալը, բ) ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, գ) այդ որոշման հետևանքով ընկերության զուտ ակտիվների չափը կպակասի կանոնադրական կապիտալից		ճիշտ են և ա), և բ) պնդումները ճիշտ են և բ) և գ) պնդումները ճիշտ են և ա) և գ) պնդումները ճիշտ պատասխան նշված չէ
377	Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարման միջոց կարող են լինել.		մտավոր սեփականությունը արժեթղթերը գույքային իրավունքները նշված բոլոր պատասխանները ճիշտ են

		խորհրդի որոշմամբ բաժնետիրական ընկերության կողմից ձեռք բերված տեղաբաշխված բաժնետոմսերը ա) չեն տալիս ձայնի իրավունք բ) տալիս են ձայնի իրավունք գ) չեն հաշվարկվում շահութաբաժիններ վճարելու դեպքում	ճիշտ է միայն ա) պնդումը ճիշտ է միայն բ) պնդումը ճիշտ են և բ), և գ) պնդումները ճիշտ են և ա), և գ) պնդումները
		Բաժնետիրական ընկերության գույքի շուկայական արժեքը կարող է որոշվել ա) դատարանի կողմից բ) խորհրդի կողմից գ) խորհրդի որոշմամբ՝ անկախ գնահատողի ներկայացմամբ	ճիշտ է միայն ա) պնդումը ճիշտ են ա) և բ) պնդումները ճիշտ են և ա) և բ) և գ) պնդումները ճիշտ են բ) և գ) պնդումները
		Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, խոշոր գործարք կնքելու մասին որոշումը ընդունվում է.	խորհրդի կողմից միաձայն ժողովի կողմից՝ միաձայն ժողովի կողմից՝ դրան մասնակցող բաժնետերերի (քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի) ձայների 3/4-ով վերստուգող հանձնաժողովի կողմից
		380	մինչև 500 քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետեր ունեցող բաժնետիրական ընկերությունում շահագրգռվածության առկայությամբ գործարք կնքելու մասին որոշումը ընդունում է ընկերության խորհուրդը՝ գործարքը կնքելու մեջ շահագրգռվածություն չունեցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ
		381	500–ից ավելի քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետեր ունեցող բաժնետիրական ընկերությունում շահագրգռվածության առկայությամբ գործարք կնքելու մասին որոշումը ընդունում է ընկերության խորհուրդը՝ գործարքը կնքելու մեջ շահագրգռվածություն չունեցող խորհրդի անկախ անդամների ձայների մեծամասնությամբ
		381	Նշվածներից ո՞րը ճիշտ չէ
			Եթե խորհրդի բոլոր անդամները շահագրգիռ անձինք են ճանաչվել, ապա գործարքը կնքելու մասին որոշումն ընդունում է ժողովը՝ գործարքում շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ

			մինչև 500 բաժնետեր ունեցող բաժնետիրական ընկերությունում շահագրգռվածության առկայությամբ գործարք կնքելու մասին որոշումը ընդունում է ընկերության ընդհանուր ժողովը
382	Բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովը համարվում է ընկերության կառավարման		գործադիր մարմին բարձրագույն մարմին օրենսդիր մարմին հիմնադիր մարմին
383	Բաժնետիրական ընկերության մասնաճյուղերի, հիմնարկների և ներկայացուցչությունների ստեղծման իրավասությունը պատկանում է		ընկերության խորհրդին ընկերության ընդհանուր ժողովին ընկերության ընդհանուր ժողովին խորհրդի ներկայացմամբ ընկերության խորհրդին գործադիր մարմնի ներկայացմամբ
384	Բաժնետիրական ընկերության տարեկան ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկություններ անելու իրավունք ունեն		բոլոր բաժնետերերը միայն ընկերության խորհրդի կազմում ընդգրկված բաժնետերերը ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի առնվազն 2%-ի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը ընկերության կառավարման և ղեկավար մարմիններում ընդգրկված յուրաքանչյուր անձ
385	Նշված իրավասություններից ո՞րը չի հանդիսանում բաժնետիրական ընկերության խորհրդի բացառիկ իրավասությունը		ընկերության գործադիր մարմնի ձևավորումը ընկերության աուդիտը իրականացնող անձի վճարման չափի սահմանումը գույքի շուկայական արժեքի որոշումը ճիշտ պատասխան նշված չէ
386	Չամաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի բաժնետիրական ընկերության խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը		հաստատվում է ընկերության կանոնադրությամբ 1 տարի է չի սահմանափակվում մինչև հաջորդ տարեկան կամ արտահերթ ընդհանուր ժողովի գումարումն է
387	Բաժնետիրական ընկերության վերստուգողը հաշվետու է		ընկերության ընդհանուր ժողովին ընկերության խորհրդին ընկերության խորհրդի նախագահին ընկերության գործադիր մարմնին
388	Բաժնետիրական ընկերության հաշվապահական հաշվառման հավաստիության համար պատասխանատու է		գլխավոր հաշվապահը գործադիր տնօրենը

			վերստուգողը
			աուդիտ իրականացնող անձը
389	Հանաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, նշել ճիշտ պատասխանը.		այնպիսի հանգամանքների առկայությամբ, որոնք ակնհայտ վկայում են, որ վարկառուին տրամադրված գումարը ժամկետում չի վերադարձվի, վարկատուն իրավունք ունի լրիվ կամ մասնակի հրաժարվել վարկային պայմանագրով նախատեսված վարկը վարկառուին տրամադրելուց
			վարկատուի կողմից վարկային պայմանագրով նախատեսված վարկի ոչ նպատակային օգտագործման դեպքում վարկատուն իրավունք ունի հրաժարվել վարկառուին վարկավորելուց
			վարկառուն իրավունք ունի լրիվ կամ մասնակի հրաժարվել վարկը ստանալուց մինչև պայմանագրով սահմանված ժամկետը ծանուցելով վարկատուին, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, վարկային պայմանագրով
390	Անշարժ գույքի նկատմամբ գրավի իրավունքը ծագում է		նշված բոլոր պատասխանները ճիշտ են
			գրավի պայմանագիրը կնքելու պահից
			գրավի պայմանագիրը նոտարի կողմից վավերացնելու պահից
			գույքի նկատմամբ գրավի իրավունքի պետական գրանցման պահից
			գույքը գրավառուին հանձնելու պահից
391	Գրավատուն իրավունք ունի գրավ դրված գույքը առանց գրավառուի համաձայնության		փոխարինել համարժեք այլ գույքով
			տալ անհատույց օգտագործման
			կտակել
			նվիրաբերել
392	Հանաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, նշվածներից ո՞րը գրավի տեսակ չի հանդիսանում		կոշտ գրավ
			շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավ
			շրջանառությունից հանված օբյեկտների գրավ
			դրամական միջոցների գրավ
393	Գրավադրված բնակելի տան վրա բռնագանձում տարածելիս բնակելի տան վարձակալները		պարտավոր են ազատել բնակելի տունը, եթե վարձակալության պայմանագիրը կնքվել է հիփոթեքի պայմանագիրը կնքելուց հետո
			պարտավոր չեն ազատել բնակելի տունը, եթե վարձակալության պայմանագիրը կնքվել է հիփոթեքի պայմանագիրը կնքելուց հետո

			պարտավոր չեն ազատել բնակելի տունը, եթե համաձայնություն չեն տվել վարձակալած բնակելի տունը գրավադրելու վերաբերյալ
			ճիշտ պատասխան նշված չէ
394	Լիզինգի առարկա չի կարող հանդիսանալ		ցանկացած անշարժ գույք
			ցանկացած սպառվող շարժական գույք
			ցանկացած չսպառվող շարժական գույք
			բոլոր պատասխանները ճիշտ են
395	Փոխառության պայմանագրի առարկա կարող է հանդիսանալ		դրամ կամ անշարժ գույք
			դրամ կամ ցանկացած շարժական գույք
			դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք
			ճիշտ պատասխան նշված չէ
396	Պայմանագրի մեկ կողմը (ֆիզիկական անձ) մյուս կողմին (ֆիզիկական անձ) ի սեփականություն է հանձնում որոշակի դրամական գումար, իսկ մյուս կողմը պարտավորվում է վերադարձնել այդ գումարը և դրան հավելագրված տոկոսը: Ի՞նչ պայմանագիր է կնքվել կողմերի միջև		վարկային
			ավանդի
			փոխառության
			բանկային հաշվի
397	Ո՞ր դեպքերում փոխառության պայմանագրում վճարվելիք տոկոսի վերաբերյալ դրույթ չլինելու դեպքում պայմանագիրը չի համարվի անտոկոս		պայմանագրի առարկան չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հիսունապատիկը, և այն կապված չէ կողմերից մեկի ձեռնարկատիրական գործունեության հետ
			պայմանագրի առարկան չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հիսունապատիկը, սակայն այն կապված է կողմերից մեկի ձեռնարկատիրական գործունեության հետ
			պայմանագրի առարկան տեսակային հատկանիշով որոշվող գույք է, որի արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի հիսունապատիկը
			պայմանագրի առարկան տեսակային հատկանիշով որոշվող գույք է, սակայն այն կապված է կողմերից մեկի ձեռնարկատիրական գործունեության հետ
398	Նշվածներից ո՞րը չի հանդիսանում վարկային պայմանագրի տեսակ.		ապրանքային վարկ
			սպառողական վարկ
			առևտրային վարկ
			անտոկոս վարկ

399	Չճայած, որ մատակարարման պայմանագրով կողմերը համաձայնվել են ոչ մի պարագայում չկիրառել դրամական պահանջի գիջում, մատակարարը վարկային կազմակերպության հետ կնքել է ֆակտորինգի պայմանագիր: Նման դեպքում մատակարարի և վարկային կազմակերպության միջև կնքած պայմանագիրը կհամարվի	վիճահարույց անվավեր առոչինչ վավեր
